Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 2-ի N 787 - Ն որոշման

Ձ ԵՎ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ՝ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
(ամսական, օրական)

դիմերես




Չափը՝ 220 x 155 մմ

դարձերես

_____ ___________ 20 թ. մինչև _____ ___________ 20 թ.
_____ ___________ 20 թ. մինչև _____ ___________ 20 թ.
_____ ___________ 20 թ. մինչև _____ ___________ 20 թ.

Ժամանակավոր թույլտվությունը

տրվում է __________________________________________ ավտոմոբիլին:
(մակնիշը, համարանիշը)

Թույլատրվում է երթևեկել ____________________________
__________________________________________________
__________________________________________________
__________________________________________________
__________________________________________________
__________________________________________________
__________________________________________________
__________________________________________________
________________________________________ փողոցներով:

Արգելվում է երթևեկել ժամը ____________________________

Կ.Տ.

Ձ ԵՎ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ՝ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

(տարեկան)

դիմերես




Չափը՝ 220 x 155 մմ

դարձերես

Ժամանակավոր թույլտվությունը

տրվում է ______________________________________________ ավտոմոբիլին:

(մակնիշը, համարանիշը)

Թույլատրվում է երթևեկել ______________________________
____________________________________________________
____________________________________________________
____________________________________________________
____________________________________________________
____________________________________________________
____________________________________________________
____________________________________________________
__________________________________________ փողոցներով:

Արգելվում է երթևեկել ժամը ______________________________

Կ.Տ.

Ձ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ` ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

(ամսական, օրական)

դիմերես




Չափը` 220 x 155 մմ

դարձերես

______ ____________20 թ. մինչև ______ ____________ 20 թ.
______ ____________ 20 թ. մինչև ______ ____________ 20 թ.
______ ____________ 20 թ. մինչև ______ ____________ 20 թ.

Ժամանակավոր թույլտվությունը

տրվում է ______________________________________________ ավտոմոբիլին:
(մակնիշը, համարանիշը)

Թույլատրվում է երթևեկել ________________________________
________________________________________________________
________________________________________________________
________________________________________________________
________________________________________________________
________________________________________________________
________________________________________________________
________________________________________________________
___________________________________________ փողոցներով:

Արգելվում է երթևեկել ժամը ________________________________

Կ.Տ.

Ձ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ՝ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

(տարեկան)

դիմերես

Ä ²Ø²Ü²Î²ìàð
ÂàôÚÈîìàôÂÚàôÜ No

²ÚÈ´Ü²Î²ì²ÚðºðàôØ ´ºèÜ²î²ð ²ììîàØà´ÆÈÜºðÆ
ºðÂºìºÎàôÂÚàôÜÜ ²ð¶ºÈì²Ì öàÔàòÜºðàôØ
´ºèÜ²öàÊ²¸ðàôØÜºðÆ Æð²Î²Ü²òØ²Ü Üä²î²Îàì
´ºèÜ²î²ð ²ììîàØà´ÆÈÜºðÆ ºðÂºìºÎàôÂÚàôÜÀ
ÂàôÚÈ²îðàÔ

0000

Չափը՝ 220 x 155 մմ

դարձերես

Ժամանակավոր թույլտվությունը

տրվում է ________________________________________________ ավտոմոբիլին:

(մակնիշը, համարանիշը)

Թույլատրվում է երթևեկել ________________________________
______________________________________________________
______________________________________________________
______________________________________________________
______________________________________________________
______________________________________________________
______________________________________________________
______________________________________________________
___________________________________________ փողոցներով:

Արգելվում է երթևեկել ժամը ______________________________

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 2-ի N 787 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ՝ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության բնակավայրերի՝ բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունն արգելված փողոցներում բեռնափոխադրումների իրականացման նպատակով բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունը թույլատրող ժամանակավոր թույլտվություն (այսուհետ՝ ժամանակավոր թույլտվություն) տալու ընթացակարգը:

2. Ժամանակավոր թույլտվություն ստանալու համար ավտոմոբիլի սեփականատերը (լիազորված անձը) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) է ներկայացնում դիմում, որում նշվում են սեփականատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը, ավտոմոբիլի մակնիշը, հաշվառման համարանիշը, բեռնափոխադրում իրականացնելու նպատակը, ժամկետը, վայրը՝ սկզբնակետն ու վերջնակետը, երթուղին, ինչպես նաև ժամանակավոր թույլտվություն ստանալը հիմնավորող այլ տեղեկություններ:

3. Դիմումին կից ներկայացվում են ավտոմոբիլի հաշվառման վկայագրի պատճենը, ինչպես նաև այլ փաստաթղթեր (եթե այդպիսիք առկա են), որոնք հիմնավորում են բեռնա-

տար ավտոմոբիլների երթևեկությունն արգելված փողոցներում բեռնափոխադրում իրականացնելու անհրաժեշտությունը:

4. Պահանջվող տեղեկությունները կամ փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում անձին տրվում է 5-օրյա ժամկետ՝ փաստաթղթերն ամբողջությամբ ներկայացնելու համար:

5. Դիմումն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում ճանապարհային ոստիկանությունը կատարում է հետևյալ գործողություններից որևէ մեկը՝

1) տալիս է ժամանակավոր թույլտվություն.

2) ընդունում է որոշում ժամանակավոր թույլտվություն տալը մերժելու մասին:

6. Եթե դիմողի առաջարկած երթուղով կամ ժամանակահատվածում բեռնափոխադրման իրականացման նպատակով ժամանակավոր թույլտվություն տալը հնարավոր չէ, ապա ճանապարհային ոստիկանությունը դրա մասին տեղեկացնում է դիմողին՝ նրան առաջարկելով նոր երթուղի կամ այլ ժամանակահատված:

7. Ժամանակավոր թույլտվություն տալը մերժվում է, եթե՝

1) բեռնափոխադրման ժամանակ կարող է վտանգվել ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքն ու առողջությունը կամ կարող է դադարեցվել կամ սահմանափակվել (առաջանալ խցանումներ) ճանապարհային երթևեկությունը.

2) անձը սույն կարգով սահմանված ժամկետում չի ներկայացնում կամ թերի է ներկայացնում պահանջվող տեղեկությունները կամ փաստաթղթերը.

3) դիմողի առաջարկած երթուղով կամ ժամանակահատվածում բեռնափոխադրման իրականացման նպատակով ժամանակավոր թույլտվություն տալը հնարավոր չէ, և նա հրաժարվում է ճանապարհային ոստիկանության կողմից առաջարկված երթուղով կամ այլ ժամանակահատվածում փոխադրման իրականացման նպատակով ժամանակավոր թույլտվություն ստանալուց.

4) բեռնափոխադրումները կարող են իրականացվել առանց ժամանակավոր թույլտվություն ստանալու՝ այլ երթուղով:

8. Տրված ժամանակավոր թույլտվությունները գրանցվում են Հայաստանի Հանրապետության բնակավայրերի՝ բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունն արգելված փողոցներում բեռնափոխադրումների իրականացման նպատակով բեռնատար ավտոմոբիլների երթևեկության ժամանակավոր թույլտվությունների հաշվառման մատյանում:

9. Ժամանակավոր թույլտվությունը փակցվում է բեռնատար ավտոմոբիլի խցիկի դիմապակու վերևի մեջտեղի մասում:

10. Յուրաքանչյուր ամսվա մինչև 5-ը ճանապարհային ոստիկանությունը Հայաստանի Հանրապետության համայնքներին տեղեկատվություն է տրամադրում իրենց տարածքներում երթևեկելու համար նախորդ ամսվա ընթացքում 15 օրվանից ավելի ժամկետով տրված ժամանակավոր թույլտվությունների մասին: Եթե տեղեկատվությունն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարը պատճառաբանված որոշում է ընդունում ժամանակավոր թույլտվության գործողությունը դադարեցնելու մասին, ապա ժամանակավոր թույլտվությունը համարվում է ուժը կորցրած, և ճանապարհային ոստիկանությունը հետ է պահանջում թույլտվությունը:

11. Սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշման և 8-րդ կետով նախատեսված մատյանի ձևերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ